կուն առնել զՀայս, և յինքեանս յսփչտակել նաեւ զվանս Ս. Յակոբայ զրնիկ վիճակ նոցա, գրեցին սուտ ամբաստանութիւն առ Եպարքոսն, թէ զհրովարտակն քոյ՝ զոր յղեցեր այսր, ոչ ընկալան Հայք, այլ մերժեալ զնոյն, տակաւին տիրեն վիճակին Հապեշաց։ Այնպէս և վասն զեղիազար վարդապետէ չարախօս լեալ ասացին, թէ մատուցեալ նորա 30,000 դահեկան առ Հիւսէյին Բդեշխն Գազայու, չինեաց անդ եկեղեցի Հայոց։ Յաւելին և որ 'ի Կոստանդինուպօլիս էին Յոյնք այլ եւս ամբաստանութիւն վասն Եղիազարու, և բազում երեւելի տրովք հաճեալ զեպարքոսն՝ առին 'ի նմանէ հրովարտակ, զի Յունաց լիցի նաեւ Ս. Յակոբ, և Եղիազար ուր եւ դոցի իբրեւ դլխապարտ ածցի 'ի Դուռն։

Իսկ ամբաստանութիւն Պատրիարքին Յունաց էր այս, յորոյ վերայ եկ հրովարտակ Արքունուստ 'ի \ Մուհարրէմ ամսոյ՝ \•ՂԱ թուին։ «Հայք ոչ անսացեալ Կայսերական հրովարտակաց եւ դատարանի վաւերական գրոց, հակառակ նախնական սովորութեանց. բռնութեամբ ունին զվանս Ս. Յակոբայ պարտիզօք և ամենայն պարագայիւք, որ էր վանք Վրաց. եւ զրանալի երկաթեայ դրան Բեթզեհէմի, և յետուստ կողմանէ նորին զսենեակս Հապեշաց և Գպթոց, և զպարտէզն առաջի նոցա։ Արդ վանքն այն, պարտէզքն և բովանդակ տեղիքն յանձնեսցի Յունաց, և քակեսցի որմն՝ զոր շինեցին Հայք 'ի մէջ պարտիզին 'ի Բեթզեհէմ, և բանալիքն առցի 'ի ձեռաց Հայոց։

Ի հասանիլ այսր հրովարտակի յերուսաղէմ հանդերձ սպասաւորօք Եպարքոսին, փութայ Եղիազար եւ անկաւ 'ի դրունս մեծամեծաց և առ Բդեշխ քաղաքին Հասան Փաշայ եւ առ հայր նորա Հիւսէյին Փաշայ Բդեշխ Գազայի, որք էին իւր բարեկամք. և 'ի ձեռն նոցա խափանեաց առ ժամանակ մի զկատարումն հրամանաց։ Դիմեաց ապա եւ առ մեծ Բդեշխն Դամասկոսի, Թէյար ՀՂԼ՝ խնդրել օգնութիւն 'ի նմանէ։ Իսկ նա՝ քանզի բազում ինչ առեալ էր 'ի Յունաց, եւ ունէր եւս 'ի ձեռին զհրաման Եպարքոսին վասն տալոյ 'ի Յոյնս զՍ. Յակոբ. սատեաց Եղիազարու և արգել զնա 'ի բանտի։ Եւ Եղիազար տուեալ Բդեշխին քանի մի քսակս արծաթոյ՝ արձակեցաւ, եւ խոստացաւ